



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք.Վանաձոր, Հայքի հրապարակ 1

☎ 4-61-92

Fax 2-07-70

N _____

« _____ » _____ 2016 թ.

ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Աղայան Ե-2/24

Ձեր 30.05.2016թ. թիվ E736-1943-2404 դիմումին.

Հարգելի Գ.Սարգսյան

Ի պատասխան Ձեր հարցման հայտնում եմ, որ 2016 թվականին վարչական հսկողություն է իրականացվել Լոռու մարզի Ագարակ, Անտառաշեն, Բագում, Սվերդլով, Սարալանջ, Ուռուտ, Ջրաշեն, Դարպաս, Ուրասար, Նորաշեն, Լեռնահովիտ և Կուրթան համայնքներում: Համայնքների ընտրությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.35 կետի համաձայն՝ համայնքների ցանկը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, նախարարի 29.12.2016թ. թիվ 1381-Ա հրամանով հաստատվել է վարչական հսկողության 2016թ. աշխատանքային ծրագիրը: Աշխատանքային ծրագիրը, նախարարի վերոնշյալ հրամանը և վարչական հսկողության ընթացքում կազմված արձանագրություններն ու լրացված հարցաշարերը տեղադրված են մարզպետարանի պաշտոնական կայքէջում /lori.mtaes.am հասցեով/, կայքի գլխավոր ընտրանու «Համայնքներ» բաժնի «Վարչական հսկողություն» ենթաբաժնում:

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ